ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» օգոստոսի 2024թ. N 51 - Լ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ՝ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՐԸ ԿԱՄ ԾԱՆՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) սահմանապահ զորքերի և հատուկ ստորաբաժանումների ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների (այսուհետ՝ Շահառու) բնակարանային պայմանների բարելավման իրականացման գործընթացն ապահովելու նպատակով, հիմք ընդունելով Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 17-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի N 860-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Շահառուների բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հաստատել՝

1) Հանձնաժողովի անհատական կազմը՝ ԱԱԾ տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի գլխավորությամբ՝ համաձայն հավելված N 1-ի (գաղտնի):

2) Հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. ԱԱԾ ֆինանսական վարչության պետին՝

1) ապահովել Որոշման հավելվածի 29-րդ կետով սահմանված դեպքում և ժամկետում վկայագրի միջոցով ձեռք բերվող բնակարանի (բնակելի տուն) գնի վճարումը՝ բնակարան (բնակելի տուն) վաճառողի կողմից ընտրված բանկի միջոցով վաճառողի հաշվեհամարին առուվաճառքի պայմանագրում նշված գումարը փոխանցելու միջոցով՝ վկայագրում նշված գումարի չափով,

2) ապահովել Որոշման հավելվածի 30-րդ կետով սահմանված դեպքում և ժամկետում Շահառուի կողմից ընտրված նոտարի դեպոզիտային հաշվեհամարին բնակարանի գնման վկայագրում նշված գումարի փոխանցումը:

4. ԱԱԾ տնտեսական վարչության պետին՝ Որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով Շահառուին իր ցանկությամբ սեփականության իրավունքով անհատույց բնակարան տրամադրելու և ԱԱԾ տնօրինման ներքո Շահառուի բնակարանային պայմանները բավարարող համապատասխան բնակարան լինելու դեպքում ապահովել Շահառուին սեփականության իրավունքով անհատույց բնակարանի տրամադրումը, որի գինը կարող է պակաս լինել Որոշման համաձայն համապատասխան բնակավայրի համար հաշվարկված բնակարանի գնից, սակայն չի կարող գերազանցել այդ գինը:

ՀՀ ազգային անվտանգության
ծառայության տնօրեն **Ա. ԱԲԱՋՅԱՆ**

Հավելված N 2

ՀՀ ԱԱԾ տնօրենի
2024 թ. օգոստոսի 28-ի
N 51 - Լ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ՝ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՐԸ ԿԱՄ ԾԱՆՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) սահմանապահ զորքերի և հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների (այսուհետ՝ Շահառու) բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Շահառուների բնակարանային պայմանների բարելավման գործընթացի հետ կապված հարցերը քննարկելիս Հանձնաժողովը ղեկավարվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով, Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովի գործունեության նպատակն է Շահառուների բնակարանային պայմանների բարելավման գործընթացի ապահովումը:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովը բնակարան կամ աջակցություն տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը՝ համաձայն Ձև-ի, կայացնում է բնակարանային գործերի հիման վրա, որոնք համապատասխան համայնքից պահանջվում են հանձնաժողովի հերթական նիստի օրվան նախորդող առնվազն 15-օրյա ժամկետում:

5. Հանձնաժողովը՝

1) ստուգում է համայնքներից ստացված բնակարանային գործերի համապատասխանությունը Որոշման պահանջներին,

2) համապատասխան մարզպետի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի) կողմից Որոշմամբ սահմանված կարգով ԱԱԾ ուղարկված Շահառուների ամփոփ ցուցակների հիման վրա կազմում է Շահառուների անվանացուցակներ (Որոշման հավելվածի NN 5-6 ձևեր) և ապահովում է մամուլում և զանգվածային լրատվության միջոցներով դրանց հրապարակումը,

3) Որոշմամբ սահմանված կարգով հաշվարկում է Շահառուներին հասանելիք սենյակների թիվը և տրամադրվող աջակցության չափը,

4) ըստ հերթացուցակի բնակարանային պայմանների բարելավման վերաբերյալ կայացնում է եզրակացություններ (Ձև),

5) Շահառուներին բնակարան կամ աջակցություն տրամադրելու վերաբերյալ դրական եզրակացությունների (Ձև) հիման վրա ապահովում է Շահառուներին բնակարան կամ բնակարանների գնման վկայագրեր (Որոշման հավելվածի N 9 ձև) տրամադրելու մասին ԱԱԾ տնօրենի հրամանի նախագծի կազմումը,

6) Շահառուների կողմից Որոշմամբ սահմանված կարգով բնակարան ստանալու կամ ձեռք բերելու դեպքում 10 օրյա ժամկետում ապահովում է այդ մասին գրավոր տեղեկացումը համապատասխան մարզպետարանին (Երևան քաղաքի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանին):

6. Սույն կարգի 4-րդ կետով նշված բնակարանային գործերում Որոշմամբ նախատեսված փաստաթղթերը Հանձնաժողովին թերի ներկայացվելու դեպքում, Հանձնաժողովի քարտուղարի կողմից համայնքապետարանին (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանին), իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Շահառուին գրավոր ներկայացվում է բացակայող փաստաթղթերի ցանկը, շտկման ենթակա բացթողումները, և առաջարկվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները: Նշված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում Շահառուին բնակարան կամ աջակցություն տրամադրելու հարցը Հանձնաժողովը քննարկում է ներկայացված փաստաթղթերի շրջանակներում և դրանց հիման վրա կայացնում է համապատասխան եզրակացություն:

7. Հանձնաժողովն իրավասու է պահանջել Շահառուին վերաբերող ԱԱԾ համապատասխան ստորաբաժանումներում առկա փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկություններ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի գումարման միջոցով, որոնք հրավիրվում են Հանձնաժողովի նախագահի կողմից:

9. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության:

10. Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի նիստի վայրի, օրվա և ժամի մասին Հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է նիստից առնվազն 3 օր առաջ:

11. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են Հանձնաժողովի անդամների 2/3 մասնակցության դեպքում:

12. Հանձնաժողովի նիստերը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալը:

13. Հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել Շահառուները, համայնքապետարանի, մարզպետարանի (Երևան քաղաքի դեպքում՝ Երևանի

քաղաքապետարանի), պետական այլ մարմինների իրավասու աշխատակիցները, որոնք նիստերին կարող են մասնակցել միայն հարցերի քննարկմանը՝ իրենց վերաբերելի մասով:

14. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

15. Յուրաքանչյուր շահառուի համար Հանձնաժողովի կողմից կայացվում է առանձին եզրակացություն (Ձև):

16. Եզրակացության (Ձև) մեջ նշվում են նիստի անցկացման օրը, Հանձնաժողովի շրջանակներում քննարկված հարցի և Հանձնաժողովի կողմից կայացված որոշման բովանդակությունը և Հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքները (առկայության դեպքում):

17. Եզրակացությունը (Ձև) ստորագրում են Հանձնաժողովի անդամները, քարտուղարը, հաստատում՝ Հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի՝ հատուկ կարծիք ունեցող անդամները ստորագրում են եզրակացությունը՝ ստորագրությանը կից գրառելով «հատուկ կարծիքը կցվում է» բառերը, միաժամանակ եզրակացությանը կցելով հատուկ կարծիքը:

18. Հանձնաժողովի դրական եզրակացությունների հիման վրա յուրաքանչյուր Շահառուի մասով Շահառուին բնակարան կամ բնակարանի գնման վկայագիր (Որոշման հավելվածի N 9 ձև) տրամադրելու մասին ԱԱԾ տնօրենի հրամանի նախագիծը կազմվում և ԱԱԾ տնօրենի հաստատմանն է ներկայացվում համապատասխան եզրակացությունը (Ձև) կայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

19. Հանձնաժողովի գործունեության ընթացքում ստացված և կազմված փաստաթղթերը Հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ՝ սահմանված կարգով պահվում են ԱԱԾ տնտեսական վարչությունում:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

20. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները,

2) հրավիրում է Հանձնաժողովի նիստերը և վարում դրանք,

3) վերահսկողություն է իրականացնում Հանձնաժողովի աշխատանքների նկատմամբ,

4) իր բացակայության դեպքում հանձնարարում է Հանձնաժողովի նախագահի տեղակալին հրավիրել և վարել Հանձնաժողովի նիստերը,

5) որոշում է Հանձնաժողովի նիստի հետ կապված հարցերի քննարկման հերթականությունը,

6) հաստատում է Հանձնաժողովի եզրակացությունը (Ձև),

7) Հանձնաժողովի նիստերին հրավիրված անձանց կարող է տալ հարցեր,

8) Հանձնաժողովի համապատասխան անդամներին հանձնարարում է՝

ա. Որոշմամբ սահմանված կարգով մշակել և Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել Շահառուների անվանացուցակները (Որոշման հավելվածի NN 5-6 ձևեր),

բ. մշակել և Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել Շահառուներին բնակարան կամ բնակարանի գնման վկայագրեր (Որոշման հավելվածի N 9 ձև) տրամադրելու մասին ԱԱԾ տնօրենի հրամանի նախագիծը,

գ. իրականացնել Հանձնաժողովի իրավասությանը վերապահված գործառույթների շրջանակներում այլ աշխատանքներ,

9) ԱԱԾ տնօրենի ստորագրմանն է ներկայացնում Շահառուներին բնակարան կամ բնակարանի գնման վկայագրեր (Որոշման հավելվածի N 9 ձև) տրամադրելու մասին ԱԱԾ տնօրենի հրամանի նախագիծը,

10) Որոշման հավելվածի 25-րդ կետով սահմանված դեպքում և ժամկետներում Շահառուի հետ կնքում է բնակարանի գնման վկայագրի (Որոշման հավելվածի N 9 ձև) միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիր (Որոշման հավելվածի N 7 ձև), իսկ սեփականության իրավունքով անհատույց բնակարան տրամադրելու դեպքում՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր,

11) լրացուցիչ ուսումնասիրման անհրաժեշտության դեպքում ԱԱԾ համապատասխան ստորաբաժանումներից պահանջում է անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկություններ,

12) իրականացնում է Որոշմամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԸ

21. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին,

2) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը,

3) Հանձնաժողովի նիստերին հրավիրված անձանց կարող է տալ հարցեր,

4) ծանոթանում է Հանձնաժողովի քննարկմանը ենթակա հարցերին,

5) ստորագրում է Հանձնաժողովի եզրակացությունը (Ձև), հատուկ կարծիք ունենալու դեպքում սույն աշխատակարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով հայտնում դրա մասին, իսկ հատուկ կարծիքը կցում եզրակացությանը,

6) լրացուցիչ ուսումնասիրման անհրաժեշտության դեպքում միջնորդում է Հանձնաժողովի նախագահին ԱԱԾ համապատասխան ստորաբաժանումներից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկություններ,

7) կատարում է Հանձնաժողովի նախագահի կողմից տրված հանձնարարությունները,

8) իրականացնում է Որոշմամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

22. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին,

2) Հանձնաժողովի նիստերին հրավիրված անձանց կարող է տալ հարցեր,

3) ծանոթանում է Հանձնաժողովի քննարկմանը ենթակա հարցերին,

4) ստորագրում է Հանձնաժողովի եզրակացությունը (Ձև), հատուկ կարծիք ունենալու դեպքում սույն աշխատակարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով հայտնում դրա մասին, իսկ հատուկ կարծիքը կցում եզրակացությանը,

5) Հանձնաժողովի նիստին հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում, այդ մասին տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին,

6) կատարում է Հանձնաժողովի նախագահի կողմից տրված հանձնարարությունները.

7) իրականացնում է սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

23. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է Հանձնաժողովի նիստերը, մշտական կապ է պահպանում Շահառուների, համայնքների, մարզպետարանների (Երևան քաղաքի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) և պետական այլ մարմինների իրավասու աշխատակիցների հետ՝ Հանձնաժողովի նիստերը պատշաճ կազմակերպելու նպատակով,

2) Հանձնաժողովի հերթական նիստի օրվան նախորդող առնվազն 15-օրյա ժամկետում համապատասխան համայնքից պահանջում է Որոշմամբ նախատեսված բնակարանային գործերը,

3) Հանձնաժողովի ուսումնասիրությանը ներկայացնում է իրեն փոխանցված բնակարանային գործերը, ինչպես նաև բնակարանային գործերի հետ կապված իր կողմից կազմված արձանագրությունները,

4) նախապատրաստում է Հանձնաժողովի եզրակացությունները և ստորագրում դրանք,

5) Շահառուին բնակարան կամ բնակարանի գնման վկայագիր (Որոշման հավելվածի N 9 ձև) տրամադրելու մասին ԱԱԾ տնօրենի հրամանի ստորագրման օրվանից հետո ոչ ուշ, քան 5-օրյա ժամկետում ծանուցում է Շահառուին ԱԱԾ տնօրենի համապատասխան հրամանի մասին՝ առաջարկելով Հանձնաժողովի նախագահի հետ կնքել բնակարանի գնման վկայագրի (Որոշման հավելվածի N 9 ձև) միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիր (Որոշման հավելվածի N 7 ձև), իսկ սեփականության իրավունքով անհատույց բնակարան տրամադրելու դեպքում՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր,

6) նախապատրաստում է սույն կետի 5-րդ ենթակետում նշված պայմանագրերը,

7) Շահառուներին պարզաբանում է, որ բնակարանի գնման վկայագիրը (Որոշման հավելվածի N 9 ձև) արժեթուղթ չէ և ենթակա չէ օտարման կամ գրավադրման (բացառությամբ այն դեպքերի, երբ վկայագիր (Որոշման հավելվածի N 9 ձև) ստացողը վկայագրով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ներգրավում է հիփոթեքային վարկի միջոցներ), բռնագանձման կամ այլ անձի փոխանցման,

8) հետևում է բնակարանի գնման վկայականի՝ Որոշմամբ սահմանված գործողության ժամկետին, որի լրացման դեպքում անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովի անդամներին, համայնքների, մարզպետարանների (Երևան քաղաքի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) իրավասու աշխատակիցներին և Շահառուներին,

9) Հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է Հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, ժամանակի և քննարկվող հարցերի մասին՝ նիստից 3 օր առաջ,

10) կատարում է Հանձնաժողովի նախագահի կողմից տրված հանձնարարությունները,

11) իրականացնում է Որոշմամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

Ձև

ՀՀ ԱԱԾ տնօրենի
2024 թ. օգոստոսի 28-ի
N 51 - Լ հրամանի 2-րդ
հավելվածի

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հանձնաժողովի նախագահ,
ԱԱԾ տնօրենի տեղակալ

_____
(կոչումը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

«_____» _____ 20__թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ՝ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՐԸ ԿԱՄ ԾԱՆՐ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ և ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

_____
Շահառուի անունը, հայրանունը, ազգանունը

_____
ստորաբաժանումը

Հանձնաժողովի կողմից քննարկված հարցերը և դրանց վերաբերյալ կայացված որոշումները

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նիստն անցկացվել է «____» _____ 20__թ.

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

_____

Հանձնաժողովի անդամներ՝

_____

Հանձնաժողովի քարտուղար՝

_____